AMERIABANK

28.06.2018թ.
O.AB.100.11CB.ESC.2.3219.18

Բենեֆիցիար՝
ՀՀ ֆինանսների նախարարություն

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն Երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ մշակույթի նախարարության և «ՎԱՆՅԱՆ ԵՎ ՀՈՎՍԵՓՅԱՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 27.12.2017թ. կնքված «Պետության կարիքների համար կապիտալային աշխատանքների կատարման պետական գնման» թիվ ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-17/54-3 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում՝ մինչև 8,958,057.00 (ութ միլիոն ինը հարյուր հիսունութ հազար հիսունյոթ) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար)՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել մինչև 8,958,057.00 (ութ միլիոն ինը հարյուր հիսունութ հազար հիսունյոթ) ՀՀ դրամ՝ Պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Սույն Երաշխիքը գործում է մինչև 30 հուլիսի 2018թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրա համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող Պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Բենեֆիցիարն իրավունք ունի Երաշխիք տվող անձի բանկից՝ բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի, պահանջել Երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել Պահանջում նշված գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող Պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված

AMERIABANK CJSC
2 V. Sargsyan Str., Yerevan
0010, Republic of Armenia
T: (374 10) 56 11 11
F: (374 10) 51 31 33
www.ameriabank.am
info @ ameriabank.am

HERE AND BEYOND

ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Պահանջում նշված վճարման ենթակա գումարի 0.05 տոկոսի չափով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝
    ա) Պահանջը չի համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին կամ
    բ) Պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո
11. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:
12. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
13. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն՝ **Գագիկ Սահակյան**